TOPICAL DIALOGUES

«Ռեգիոն» հետազոտական կենտրոնի ծրագիրը

ՀՐԱՏԱՊ ԵՐԿԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հայաստանի ինտեգրացիոն նոր օրակարգի մասին

N 3 2015

Սույն տեղեկագիրը պատրաստվել է «Ռեգիոն» հետազոտական կենտրոնի ԱՄՆ դեսպանության հասարակայնության հետ կապերի գրասենյակիկողմից ֆինանսավորված «Հրատապ երկխոսություններ Հայաստանի ինտեգրացիոն նոր օրակարգի մասին» ծրագրի շրջանակներում: Այստեղ արտահայտված կարծիքի, եզրակացության կամ առաջարկության համընկնումը ԱՄՆ կառավարության դիրքորոշման հետ պարտադիր չէ:

Մենք ինտերնետում՝

www.regioncenter.info

www.publicdialogues.info

https://www.facebook.com/RegionCenter?fref=ts

Հայաստանյան ԶԼՄ-ների համար օնլայն մամուլի ասուլիսների մասին

«Հրատապ երկխոսություններ Հայաստանի ինտեգրացիոն նոր օրակարգերի մասին» ծրագրի շրջանակներում, որին աջակցում է ԱՄՆ դեսպանության հասարակայնության հետ կապերի գրասենյակը, մեր «Ռեգիոն» հետազոտական կենտրոնն անց է կացնում ինտերնետ մամուլի ասուլիսների շարք Հայաստանի լրատվամիջոցների համար: Տարբեր երկրների մասնագետներ պատասխանում են մասնակից լրատվամիջոցների հարցերին, որոնք կապված են հետխորհրդային տարածաշրջանի երկրների ինտեգրացիոն գործընթացների ու իրադարձությունների հետ:

Մամուլի ասուլիսների թեմաներն ու հարցերը կարող են ուղղակի կամ անուղղակի կապ ունենալ Հայաստանի ներկայիս ինտեգրացիոն օրակարգի հետ, բայց դրանք բոլորը ձեւավորում են գործընթացների ներկայիս պատկերը:

«Առաջին ձեռքի» այդ մեկնաբանությունները Հայաստանի լրագրողները տպագրում են իրենց լրատվամիջոցների թողարկումներում:

Տեղեկագրի այս համարում տեղ են գտել **2015** թ. մարտի ընթացքում կազմակերպված մամուլի ասուլիսների նյութերի հատվածները:

Օնլայն մամուլի ասուլիսներ հայաստանյան մեդիայի համար

Քաղաքագետ ԱՅԴՈՍ ՍԱՐԻՄԻ (Ղազախստան) հայաստանյան ԶԼՄ-ների համար կազմակերպված ինտերնետ մամուլի ասուլիսից

20.03. 2015

ԹԵՄԱՆԵՐԸ. Եվրասիական միություն. խնդիրներ, հարաբերություններ եւ հեռանկարներ, արտահերթ նախագահական ընտրություններ Ղազախստանում. պատճառներ, կանխատեսելի արդյունքներ եւ դրանց ազդեցությունը ԵԱՏՄ-ում Ղազախստանի անդամության վրա:

ԵԱՏՄ-ի մասին

- «Իրականում լուրջ երկրները ԵԱՏՄ չեն մտնի: Կարող են խաղալ, կարող են վարկեր խնդրել, լուծել իրենց խնդիրները, բայց չեն մտնի: Այնպես որ մի սպասեք ավելին եւ մեծ բան ԵԱՏՄ-ից: Այս ծրագիրը շուտով կմահանա»:
- «Իհարկե, մի նեղացեք, բայց ղազախների ինչի՞ն է պետք Հայաստանը: Ի՞նչ կարող է Հայաստանը մեզ տալ: Մենք ընդհանուր սահմաններ չունենք: Ապրանքաշրջանառությունը համարյա վիճակագրական սխալանքի մակարդակի է: Որքա՞ն են կազմում մեր ներդրումները Հայաստանում: Գրեթե զրո: Ուրեմն՝ ինչի՞ համար ուրախանանք: Բացի այդ մենք ունենք բարոյական, քաղաքական ու մարդկային պարտավորություններ Ադրբեջանի առաջ, որի նկատմամբ դուք ոչ մի բարի զգացողություններ չեք տածում: Ձեզ դեռ Ղարաբաղի համար մեծ պատերազմ է սպասում, որն այսպես թե այնպես վերադարձնել է պետք լինելու: Ես հասկանում եմ Հայաստանին, որը բավական բարդ իրավիճակում է գտնվում, ոչ բարեկամ երկրներով շրջապատված: Ռուսաստանը, հավանաբար, ձեր ղեկավարության պատկերացմամբ գոյատեւման միակ միջոցն է: Հայաստանը փաստորեն բռնվում է Ռուսաստանի սվիններից»:

ՀԱՊԿ-ի մասին

- «Ռուսաստանի հետ մենք ունենք ՀՕՊ, ռազմատեխնիկայի գծով երկկողմանի ծրագրեր: ՀԱՊԿ-ը կարծում եմ սեփական ՆԱՏՕ-ն ստեղծելու Ռուսաստանի փորձ է: Ոչ ավելին, ոչ պակաս: Բայց ՀԱՊԿ-ին սպասում է նույն հեռանկարը, ինչ ոչ ԵԱՏՄ-ին: Հիշեք թեկուզ այն, որ ՀԱՊԿ-ը ոչինչ չկարողացավ անել նույնիսկ Ղրղզստանում: Դե ուղղակի ոչինչ: Իսկ ձեր գործընկերներից շատերը միատմաբար կարծում են, թե ՀԱՊԿ-ը կպաշտպանի Հայաստանն Ադրբեջանից: Հայաստանի հարաբերությունները Ռուսաստանի հետ՝ այո, բայց ՀԱՊԿ-ը ֆիկցիա է»:

- «Ես հասկանում եմ, որ ձեր գործընկերներից շատերի համար պանթյուրքիզմը սարսափելի բառ է: Իրականում յուրաքանչյուր նորմալ, առողջ, իր պատմության, մշակույթի, հիշողության ու սրտի հետ հաշտ ղազախը պանթյուրքիստ է: Դուք երեւի մեզ չեք հասկանա, որովհետեւ հայերը եղբայրներ չունեն: Իսկ մենք մեկ ընտանիքին պատկանող ժողովուրդներ ենք: Մենք շատ ենք, ունենք տարբեր ճակատագրեր: Երբեմն՝ դժվար ճակատագրեր: Եվ նորմալ մարդը պետք է մտածի իր եղբայրների մասին: Մտածի, թե ինչպե՞ս են նրանք ապրում, ինչպե՞ս կարող է նրանց օգնել: Յուրաքանչյուր ղազախ թյուրք է եւ մուսուլման: Սա իրողություն է, մեր ամբիվալենտ հոգու մի մասը: Եվ ժամանակի ընթացքում որքան շատանան ղազախները, այնքան գերակայող կլինեն նման հայացքները»:
- «Ղազախստանն ու Ադրբեջանը եղբայրական երկրներ են, ռազմավարական գործընկերներ, ինչն արտացոլված է բազմաթիվ փաստաթղթերում: Մեզ միավորում են տնտեսական, քաղաքական ու մշակութային բազմաթիվ ծրագրեր: Կարծում եմ, որ ժամանակի ընթացքում նման համագործակցությունը կարող է հասնել մինչեւ ռազմաքաղաքական գործակցության մակարդակի: Համենայնդեպս նման միությունն քանիցս ավելի արդյունավետ ու պարտավորեցնող կլինի, քան մեր անցողիկ պարտավորություններն են ՀԱՊԿ-ի շրջանակներում»:
- «Ադրբեջանի հետ մենք եղբայրական թյուրքական ժողովուրդներ ենք: Կասպյան հարեւաններ: Ունենք տնտեսական ծրագրեր եւ այլն: Մի՞թե այս ամենը պարտավորություններ չեն: Կարծում եմ, որ հեռավոր ապագայում թյուրքական երկրները կստեղծեն սեփական ինտեգրացիոն ծրագրերը: Իդեալականը կոնֆեդերացիան է. ինչ է, կոնֆեդերացիան չի՞ կարող ունենալ իր միասնական բանակն ու նավատորմը: Կարող եք ինձ իդեալիստ կամ ուտոպիստ համարել, բայց այդպես կլինի: Ուղղակի դրա համար պետք է շատ աշխատել»:

Ապրիլին Ղազախստանում անցկացվելիք արտահերթ նախագահական ընտրությունների մասին

- «Դա նորմալ, թեկուզեւ ցինիկ քաղաքական հաշվարկ է: Իշխանություններն ուզում են ընտրություններն անցկացնել կոմֆորտ եւ կանխատեսելի պայմաններում: Ի՞նչ կլինի հաջորդ տարի նավթի հետ: Ոչ ոք չի կարող պատասխանել: Բացի այդ մեզ սպասում է տենգեի եւս մեկ արժեզրկում: 1988-1999 թթ. նման սցենարով երկու ընտրական գործընթացներ ենք ունեցել»:
- «Այս ընտրություններում կհաղթիՆուսուլթան Նազարբաեւը: Ոչ մի կասկած դրանում լինել չի կարող: Իր իշխանությունը նա ոչ ոքի չի փոխանցի: Համենայդեպս՝ առաջիկա 5 տարիների ընթացքում: Հետագայում ցույց կտա ծրագիրների պատերազմը: Այսպես ասենք՝ ընտրություններն անհրաժեշտ են անորոշությունը երկարաձգելու համար: Նազարբաեւն ուղղակի ուզում է լուծել տակտիկական խնդիրներ, այդ թվում՝ կապված այն հարցի հետ, թե ո՞վ է լինելու նրա հետնորդը: Դե նաեւ, ինչպես արդեն ասել եմ, ընտրություններից հետո պետք է լինելու կատարել տնտեսական ծայրաստիճան ոչ պոպուլյար քայլեր, որոնց համար նոր մանդատ է պետք»:

Նյութն ամբողջությամբ այստեղ՝ http://regioncenter.info/node/1034

Վերլուծաբան ԳՈՐԴՈՆ ՀԱՀՆԻ (ԱՄՆ) հայաստանյան ԶԼՄ-ների համար կազմակերպված ինտերնետ մամուլի ասուլիսից

26.03. 2015

ԹԵՄԱՆԵՐԸ. Մեր տարածաշրջանի երկրների անվտանգության խնդիրներն ու եվրոպական ու եվրասիական ինտեգրացիոն գործընթացները, Ռուսաստանի՝ ինտեգրացիոն գործընթացներն առաջ մղելու քաղաքականությունը, հետխորհրդային երկրներում եւ Ռուսաստանում իսլամական էքստրեմիզմը:

Ինտեգրացիոն գործընթացների ու անվտանգության մասին

- «Ցավոք, ԵՄ-ի ու ԵԱՏՄ-ի՝ Ուկրաինայի հետ հարաբերությունների հարցով բանակցություններից հրաժարումը (Ուկրաինայի ներսում այս հարցում կան տարբեր նախասիրություններ, որոնք հասարակական կարծիքի վերջին հարցումների համաձայն շարունակում են տարբեր մնալ) հանգեցրեց անվտանգության ճգնաժամի: Եվ դա արտահայտվում է Մոսկվայի՝ Եվրոպայի զինուժերի մասին պայմանագրից դուրս գալով ու եվրոպական բանակի ստեղծման ուղղությամբ վերջերս ձեռնարկվող փորձնական քայլերով: Վաշնգտոնը ճնշումներ կգործադրի ՆԱՏՕ-ի անդամ երկրների վրա, որպեսզի նրանք պաշտպանական ծախսերի համար հատկացնեն իրենց ՀՆԱ 2%-ը: Եվ դա եվրոպական բանակը չափազանց թանկ հաճույք կդարձնի: ԵՄ-ն ստիպված կլինի հետեւել ՆԱՏՕ-ին, որը կավելացնի իր ճնշումները Ռուսաստանի վրա եւ Եվրոպան կգցի երկու կրակի արանքը: Մոսկվան ամենայն հավանականությամբ կպնդի Համագործակցության Շանհայան կազմակերպության միլիտարիզացիայի հարցում, կաշխատի ՀԱՊԿ-ի ռազմական ներուժի ամրապնդման եւ ԲՐԻԿՍ-ի կիսամիլիտարիզացիայի ուղղությամբ »:
- «Ես քանիցս եմ կրկնել ու խորհուրդ տվել, որ լարվածության այս փուլում համագործակցությունը կդառնա Ռուսաստանի ու Արեւմուտքի միջեւ վստահության ամրապնդման անկյունաքարը: Վերջ ի վերջո, չնայած ստալինյան բոլոր սարսափներին, մենք կարողացանք համագործակցել ԽՍՀՄ-ի հետ Հիտլերյան Գերմանիայի դեմ: Իսլամական պետությունն ու Ալ-Ղաիդան պակաս պոտենցիալ խնդիր չեն, եւ Պուտինյան Ռուսաստանն անհամեմատ ավելի լավ է, քան ստալինյան ԽՍՀՄ-ն էր: Ցավոք ամեն ինչն իրենց գործը համարող կայծակնային հաղորդակցությունները լարվածությունը թույլատրելիից ավելի են մեծացնում: Ուկրաինան նույնպես իր մասնաբաժինն ունեցավ դրա մեջ: Իսլամական պետությունն ու Ալ-Ղաիդան սպառնալիք են ԱՄՆ-ի, ԵՄ-ի ու Ռուսաստանի համար, այնպես որ միասին չաշխատելու ոչ մի հիմք չկա: Եվ այդ սպառնալիքն իրականում հրատապ ու լավ շարժառիթ է Ուկրաինայի համար չպայքարելու համար»:

Ղարաբաղյան հակամարտության հանգուցալուծման վրա Ռուսաստանի ու Արեւմուտքի միջեւ պայքարի ազդեցության մասին

- «Հնարավոր է, որ նոր «սառը պատերազմի» ահագնացման դեպքում Ռուսաստանի ու Արեւմուտքի միջեւ մրցակցությունը կավելանա նաեւ Հարավային Կովկասում: Դա արդեն երեւում է ՆԱՏՕ-ի մտադրությունից ծավալելու իր «Ատլանտյան վճռականություն» զորավարժությունները մինչեւ Վրաստան եւ հարակից սեւծովյան

տարածաշրջանը: Բացի այդ խողովակաշարային պատերազմն, ամենայն հավանականությամբ միայն կսաստկանա, քանի որ Ուկրաինայի ու Ռուսաստանի միջեւ խնդիրները պահպանվում են, եւ ԵՄ-ն ձգտում է վերջ դնել ռուսաստանյան էներգակիրներից իր կախվածությանը: Ռուսաստանի՝Հայաստանին հաջող «սիրահետումը», որ տեղի էր ունենում Հայաստանի՝ ԵԱՏՄ-ին անդամագրելու համար, տարածաշրջանի աշխարհաքաղաքականացման եւս մեկ դրսեւորում է: Այդ պատճառով հավանաբար ԱՄՆ-ն, որպես ռուս-հայկական առանցքի հակակշիռ, ավելի մեծ ուշադրություն կդարձնի Բաքվի վրա»:

- «Եթե Երեւանն ու Բաքուն չեն կարողանում ինքնուրույն հասնել լուծման, ապա հաշվի առնելով Հայաստանի հետ Ռուսաստանի հինավուրց սերտ կապերն ու դրաց հետագա ամրապնդումըԵԱՏՄ շրջանակներում, երկու տարբերակ եմ տեսնում. (1) առաջվա նման հակամարտությունը պայմանավորված կլինի կողմերով եւ/կամ Ռուսաստանի ու Արեւմուտքի միջեւ մրցակցությամբ: Արեւմուտքի, որը կբռնի Ադրբեջանի կողմը որպես ռուս-հայկական միության դեմ հակաքայլ, (2) հակամարտությունը կլուծվի Ռուսաստանի հովանու ներքո կամ՝ Ռուսաստանի երաշխիքների պայմաններում»:

ԵԱՏՄ-ի հեռանկարների մասին

- «Մաքսակետերը Լուկաշենկոյի քաղաքականության արդյունք են: Քաղաքականություն, որի էությունը հետեւյալն է՝ «գրկել Մոսկվային, բայց միեւնույն ժամանակ հայացք ուղղել շրջապատի մնացած աղջիկների վրա՝ սեփական ընտրության ազատությունը պահպանելու համար»: Արդյունքում Բելառուսը, ինչպես եվրոպական նախկին խորհրդային հանրապետությունները, որոնք իրենց աշխարհագրական դիրքի պատճառով մյուսներից ավելի շատ են ճողվում Եվրոպայի ու Ռուսաստանի միջեւ, փորձում է խաղալ ցանկապատի երկու կողմերում էլ: Ես չէի պնդի, թե ԵԱՏՄ-ն որպես եվրասիական ինտեգրացիոն ծրագիր կտապալվի, որ այն անիրական է, կամ էլ, որ այն նեոկայսերապաշտական ծրագիր է: Ռուսաստանը ձգտում է կոնսոլիդացնել իր ազդեցության, անվտանգության եւ շուկաների գոտիները սեփական սահմանների մոտ: Սա նորմալ է գերտերության համար, եւ սա հավանաբար որոշ ժամանակի ընթացքում նրան կհաջողվի իրագործել: Այն ժամանակ, երբ կկարողանա զարգացնել իր տնտեսությունը եւ այդ պատճառով հմայիչ գործընկեր կդառնա, երբ կկարողանա սահմանափակել տարածաշրջանում իր քաղաքականության ռազմական բաղկացուցիչը»:
- «Ես կարծում եմ, որ նախկին ԽՍՀՄ սահմաններում կա ռեալ աշխարհագրական (մերձությունը), քաղաքական (իրար նման համակարգեր եւ քաղաքական

մշակույթ) եւ տնտեսական տրամաբանություն տնտեսական տարածաշրջանային ասոցիացիա ստեղծելու համար: Սա աշխարհի այլ տարածաշրջանների պրակտիկան է: Յուրաքանչյուր երկիր ունի դաշնակցության իր սեփական պատճառները, բայց Ռուսաստանի ցանկությունը ԽՍՀՄ-ի կամ Երրորդ Հռոմի վերաստեղծումը չէ»:

Նյութն ամբողջությամբ այստեղ՝ http://regioncenter.info/Internet-press-conference-with-Gordon-Hahn-rus-Interviews

Մոլդովայի հանրապետության խորհրդարանի պատգամավոր, քաղաքահետ ԲՈԳԴԱՆ ՅԻՐԴՅԱՅԻ (Մոլդովա) հայաստանյան ԶԼՄ-ների համար կազմակերպված ինտերնետ մամուլի ասուլիսից

31.03. 2015

ԹԵՄԱՆԵՐԸ. Մոլդովայի խնդիրները ԵՄ-ի հետ Ասոցիացման պայմանագրի ստորագրումից հետո, ԵՄ-ի հետ ինտեգրման հասարակական ընկալումները Մոլդովայում, Մոլդովա-Ռուսաստան հարաբերությունները:

Ուկրաինական ճգնաժամի ազդեցությունները Մոլդովայի արտաքին քաղաքականության վրա

- «Երկրի չեզոքությունը հարցականի տակ է: Ուժեղացել են ՆԱՏՕ-ի հետ խաղերը, ԱՄՆ-ից ու ԵՄ-ից կախվածությունը: Մոլդովան պրակտիկորեն սինխրոն գործում է Ուկրաինայի ու Ռումինիայի հետ: Ռուսաստանի ու ՊՀ-ի նկատմամբ վերաբերմունքն ավելի սառն է դարձել: Մոլդովական ԶԼՄ-ներում ուժեղացել է ռուսատյացությունը: Լարվածություն են առաջացնում ՆԱՏՕ-ի հետ ռազմական համագործակցության խորացումը, Մերձդնեստրում ու Գագաուզիայում իրավիճակի ապակայունացման փորձերը»:
- «Ի տարբերություն այդ երկրների մեր բանակի կորիզը 6000 մարդ է կազմում (իսկ բյուրոկրատիայի հետ միասին՝ մինչեւ 12 000): Մենք ոչ մի ռազմական օդանավ, տանկ եւ նույնիսկ ուղղաթիռ չունենք: Ռազմական բյուջեն կազմում է ՀՆԱ 0,3%: Ու՞մ հետ մենք պատերազմենք: Եվ քանի՞ ժամ կդիմանանք: Բացի այդ Մոլդովայում ոչ մի լուրջ բնական ռեսուրս (նավթ, գազ եւ այլն) չկա: Չունենք աշխարհագրական

առանձնահատուկ դիրք (ելք դեպի ծով եւ այլն): Մենք հետաքրքիր ենք Արեւմուտքին միայն այն պատճառով, որ մեր տարածքում ներկա է ռուսաստանյան 14 բանակի սահմանափակ անձնակազմը (մոտ1500 զինվորներ): Հենց այս փաստն է որոշ քաղաքական գործիչներին ետ պահում ավելի ռադիկալ քայլերից: Օրինակ՝ Մերձդնեստրի ուժային անշլյուսից: Մոլդովան չեզոք երկիր է: Բայց վերջերս ուժեղացել են իշխանական վերնախավի՝ Մոլդովան ՆԱՏՕ-ի մեջ ներքաշելու փորձերը: Եթե դա տեղի ունենա, ապա պատերազմից խուսափել չի հաջողվի**»:**

Մոլդովայի ու Ռումինիայի միավորման հեռանկարի մասին

- «Մոլդովայի իշխանությունների ներկայիս կազմում չկան միութենական կուսակցություններ, որոնք հանդես են գալիս միավորման օգտին: Ռումինամետ Լիբերալ կուսակցությունը դուրս է մղվել դեպի ընդդիմության շարքերը: Հետեւաբար՝ իշխանական ներկայիս վերնախավը սառը վերաբերմունք ունի միավորման գաղափարի նկատմամբ: 2009 թ-ից բոլոր նախարարություններում աշխատում են ռումինացի խորհրդականներ, որոնք փաստորեն առաջ են մղում Բուխարեստի օրակարգը»:
- «2010-2014 թթ. Մոլդովան ու Ռումինիան ստորագրեցին մի շարք գաղտնի համաձայնագրեր ոստիկանությունների ու պաշտպանության նախարարությունների, SIB-ի (Մոլդովայի հատուկ ծառայություն) եւ SRI-ի (Ռումինիայի հատուկ ծառայություն) միջեւ այս բնագավառներում ռումինական սկզբունքների ներմուծման մասին: ԶԼՄ-ներում սկսեցին խոսել այն մասին, որ մոլդովական անվտանգության ծառայությունը ռումինական հատուկ ծառայություններին է փոխանցել երկրի քաղաքացիների մասին անձնական տվյալներ»:
- «2010 թ. նախագահի պաշտոնակատար Միխայ Գիմպուն ստորագրեց եվրաինտեգրման ռազմավարական պայմանագիրը, որտեղ Ռումինաիային վերապահված է «Մոլդովայի փաստաբանի» դերակատարությունը»:
- **«**2013թ. Սահմանադրական դատարանը, որի 6 անդամներից 5-ը Ռումինիայի քաղաքացիներ են, որոշում ընդունեց այն մասին, որ Մոլդովայի պետական լեզուն ռումիներենն է: Եվ դա չնայած այն բանին, որ Սահմանադրության 13 հոդվածը միանշանակ հայտնում է, որ լեզուն մոլդովերենն է: Սա արդեն մոլդովական պետության դեմ ուղղված դիվերսիա էր»:
- «2014թ. նոյեմբերին Ռումինիայի նախագահ Տրայան Բեսեսկուն բացեիբաց հայտարարեց, որ ՆԱՏՕ-ին եւ ԵՄ-ին անդամագրվելուց հետո Բուխարեստի հաջորդ ազգային պրոյեկտը Բեսարաբիայի հետ միավորումն է: Հիշեցնենք, որ Ռումինիայի խորհրդարանում արդեն գործում է պատգամավորների մի խումբ, որը հանդես է

գալիս Ռումինիային Մոլդովայի միակցման դիրքերից: 2015 թ. մարտի 27-ին այդ խմբի պատգամավորները ժամանեցին Մոլդովա: Ռումինացի որոշ քաղաքական գործիչներ անգամ հայտնում են Մոլդովայի կլանման ժամկետների մասին. 2018 թ. (Ռումինիայի հետ միավորման 100-ամյակ) կամ՝ 2023թ.»:

- «Մենք նույնիսկ չենք կարող կողմնորոշվել, թե մենք ով ենք, մոլդովացինե՞ր ենք, թե՞ ռումինացիներ, ի՞նչ պետք է անել այս երկրի հետ, կառուցե՞լ այն, թե՞ հանձնել Ռումինայի ողորմությանը, լինել ԵՄ-ո՞ւմ, թե՞ Մաքսային Միությունում: Բայց չէ՞ որ Ռումինիան Եվրոպայի ամենաաղքատ երկրներից մեկն է: Իսկ Ուկրաինան առհասարակ բանկրոտ է»:

Ռուսաստանի հետ տնտեսական խզման հետեւանքների մասին

- «Ճգնաժամն ուժեղացել է: Ազգային տարադրամն արժեզրկվել: 2015թ. կլինի ՀՆԱ զրոյական աճ: Ներկայումս Մոլդովայում ինֆլյացիան 4,7% մակարդակի է: Մասնագետների կանխատեսումներով այն կհասնի 19-20%»:
- «ՌԴ-ն ինչպես եղել, այնպես էլ մնում է Մոլդովայի տնտեսական գլխավոր գործընկերը: Գազի 100%-ը Ռուսաստանից է: Էլեկտրաէներգա մեզ տալիս է միայն Կուչուրգանի ՀԷԿ-ը («РАО ЕЭС»): Այստեղ էլ աշխատում են մոլդովացի 500 000 գաստարբայտերներ: 2013 թ. ՌԴ-ից Մոլդովայի քաղաքացիները փոխանցել են 1,3 մլրդ դոլար: 2014 թ. ՌԴ-ն մոլդովական արտադրանքի արտահանման սահմանափակումներ հաստատեց: Արդյունքները տխուր են: Արտահանումը նվազեց 30%-ով, ԱՊՀ երկրներ՝ 19%-ով: Ազգային տարադրամն արժեզրկվեց 25-30%-ով: Մատակարարները պահանջում են գազի եւ էլեկտրաէներգիայի գների 50-60% բարձրացում»:
- «Բայց սա միայն սկիզբն է: Եթե իր ողջ ծավալով աշխատի ազատ առեւտրի գոտու պայմանագիրը, ապա ԵՄ ապրանքները պարզապես կորնչացնեն մեր արտադրողներին: Գինու, շաքարի ու պահածոների արդյունաբերությունը արդեն այսօր սնանկացման եզրին են: Իսկ ի՞նչ է լինելու այն բյուջեի հետ, **որի** 70%-ը կազմվում են մաքսատուրքերից»:
- «Մենք տնտեսական կորուստներ ենք կրում: Մոլդովական երկաթգիծը, տրանսպորտի աշխատողները, արտահանողները, տուրիստական ընկերությունները միլիոնավոր դոլարների վնասներ են կրում արտահանման, տարանցումների հարցերում ունեցած դժվարությունների պատճառով: Մեծացել է նաեւ անկայունության ու նույնիսկ պատերազմի Մոլդովա ներմուծման վտանգը: Կիեւի գործողությունների շնորհիվ Մերձդնեստրն առհասարակ հայտնվեց տնտեսական շրջափակման մեջ: Այստեղ պատերազմի վտանգը բազմիցս է մեծացել: Բացի այդ Մոլդովայում ուժեղացել է ռուսատյացությունը, տեղի են ունենում

ռուսաստանցի լրագրողների ու քաղաքագետների արտաքսումներ: Եվ սա դեռ սկիզբն է: Նույնիսկ սարսափելի է մտածելու, թե ինչ է լինելու հետագայում»:

Նյութն ամբողջությամբ այստեղ՝ http://regioncenter.info/Internet-press-conference-with-Bogdan-Tsyrdeas-rus-Interviews